

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔԸ «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ» ՇՔԱՆՇԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՌԹԻՎ ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏՈՒՄ (27 սեպտեմբեր 1978 թ.)

Խոր գոհունակությամբ Մեր շնորհակալությունն ենք հայտնում Սովետական Միության բարձրագույն իշխանության և Ձեզ, մեծարգո նախագահ Հայաստանի հանրապետության, այս շքանշանի համար, որ պատիվ ունեցանք ստանալու Ձեր ձեռքից:

Եղբայրություն ժողովուրդների և խաղաղություն աշխարհի, ահա երկու մեծ գաղափարներ, որոնք շատ թանկ են քրիստոնեական եկեղեցուն:

Քրիստոնեությունը երկրի վրա, մանավանդ մի առաքելություն է խաղաղության և մարդկանց միջև բարի կամեցողության:

Մենք երջանիկ ենք, որ մեր ժամանակներին այս մարդասիրական մեծ գաղափարները նվիրական իդեալներն են դարձել համայն մարդկության լայն զանգվածների:

Եվ Մենք ի մասնավորի մխիթարված ենք, որ մեր պետությունը՝ սովետական մեծ երկիրը, աշխարհի խաղաղասեր ուժերի առաջին շարքին է գտնվում իբրև պաշտպանը և դրոշակակիրը ժողովուրդների համերաշխ գոյակցության և պետությունների խաղաղ գործակցության:

Այս սքանչելի իրավիճակը մխիթարում է մանավանդ մեզ, հայերիս և մեր Հայաստանյայց եկեղեցուն, որովհետև մեր ժողովուրդը ահավոր չափերով տուժել է և նահատակվել անցյալում, թշնամի ուժերի արշավանքների և նրանց դաժան տիրապետությանց շրջաններում, դարեր շարունակ:

Եվ այսօր, երբ մեր փոքրիկ ժողովուրդը հազիվ ազատված անցյալի արհավիրքներից և անհետանալու վտանգից, ահա մոտ վաթսուն տարիներից ի վեր ապրում և զարգանում է իր ազատագրված հայրենի հողի վրա, Սովետական Հայաստանի դրոշի ներքո: Մենք Մեր սեպուհ պարտքն ենք նկատում ոչ միայն սրտանց աղոթել, այլև ջերմ եռանդով գործել, պայքարել, Մեր մասնակցությունը բերելով խաղաղության դատի վերջնական հաղթանակին:

Աղոթել, գործել ի խնդիր աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության, մեր հոգևորականներիս թե՛ քրիստոնեական պարտքն է և թե՛ հայրենասիրական:

Այս գիտակցությամբ է, որ Մենք իբրև առաջին սպասավորը հայ եկեղեցու մասնակցել ենք խաղաղության մարդասիրական շարժման և նույն այս գիտակցությամբ շարունակելու ենք գործել նաև հետ այսու:

Սովետական Միության բարձրագույն պետական իշխանության այս պարգևատրումը Մեզ առավել ոգեշնչում է, Մեզ առավել զորացնում է և առավել պարտավորեցնում:

Մեծարգո նախագահ, հաճեցեք մի անգամ ևս ընդունել խորազգաց Մեր շնորհակալությունը և ամենաբարի մաղթանքները Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի և անձամբ Մեր անունից: